

Երեւանի մամուլի ակումբի՝ 2002թ. ֆինանսական գործունեության

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում՝ 2002թ. հունվարի 1-ից մինչև 2002թ. դեկտեմբերի 31-ը, ստացված միջոցների ընդհանուր գումարը, ներառյալ նաև 2001թ. հունվարի 1-ի մնացորդը՝ 5716000 դրամ, կազմել է 125615000 դրամ:

ԵՄԱ անդամների անդամավճարները կազմել են՝ 226000 դրամ, դրամաշնորհներ Բաց հասարակության ինստիտուտի ԶԼՄ-ների ցանցային ծրագրի՝ 51283000 դրամ, դրամաշնորհ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի՝ 37209000 դրամ, դրամաշնորհ Եվրոպայի Խորհրդի՝ 3230000 դրամ, դրամաշնորհ ՆԱՏՕ-ի կենտրոնակայանի՝ 1718000, դրամաշնորհ ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի եւ Գերմանիայի կառավարության՝ 4620000, դրամաշնորհ Ամերիկյան համալսարանի (Վաշինգտոն) հանուն գլոբալ խաղաղության կենտրոնի՝ 11689000: Փոխարժեքային դրական տարբերությունը կազմել է 1405000 դրամ եւ 327000 դրամ ստացվել է բանկային տոկոսներից: Մեկ անդամից մուտք է եղել 8192000 դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ծախսվել **116475000** դրամ, որից.

1. Աշխատավարձի եւ հոնորորների վճարման համար ծախսվել է 45901000 դրամ:
2. Աշխատավարձից եկամտահարկ եւ կենսաթոշակային հիմնադրամ մուծումները կազմել են 15141000 դրամ:
3. Հիմնական միջոցների ձեռք բերման համար ծախսվել է 4766000 դրամ:
4. Բանկային ծառայությունների համար մուծվել է 493000 դրամ:
5. Կապի եւ փոստային ծախսերը կազմել են 3993000 դրամ:
6. Գրասենյակային, գրենական պիտույքների եւ փոքրարժեք առարկաների ձեռք բերման ծախսերը կազմել են 2932000 դրամ:
7. Տրանսպորտային ծառայությունների ծախսերը կազմել են 765000 դրամ:
8. Սեմինարների, հեռուստակոնֆերանսների կազմակերպման ծախսերը կազմել են 11247000 դրամ:
9. Գործուղման ծախսերը (ներառյալ հարկերը) կազմել են 17130000 դրամ:
10. Տարածքի վարձավճարը կազմել է 32000 դրամ:
11. Պարբերական հրատարակությունների ձեռք բերման համար ծախսերը կազմել են 294000 դրամ:
12. Կոմունալ ծախսերը կազմել են 1165000 դրամ:
13. Չծախսված գումարի վերադարձը Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամին կազմել է 1807000 դրամ:
14. Չփաստաթղթավորված (ակտով) ծախսերի դիմաց 15% եկամտահարկը կազմել է 37000 դրամ:
15. Ծառայությունների եւ ապրանքների կանխավճարը կազմել է 8000 դրամ:
16. Ապրանքների ձեռք բերման համար կազմակերպություններին վճարված ԱԱՀ կազմել է 1147000 դրամ:
17. Գույքահարկի վճարումը կազմել է 14000 դրամ:
18. Փոխարժեքի բացասական տարբերությունը կազմել է 882000 դրամ:
19. Անդամին է վերադարձվել իր մուտքագրած գումարի դիմաց՝ 8721000 դրամ:

Շնորհատու կազմակերպությունների պահանջին համապատասխան ժամանակին նրանց է ներկայացվել առանձին ծրագրերի եւ ծախսվող գումարների ամբողջ հաշվետվությունը:

ԵՄԱ կանոնադրության համաձայն բոլոր ծախսերը համաձայնեցվել են ԵՄԱ վարչության հետ:

Բոլոր եկամուտները եւ ծախսերը հիմնավորված են փաստաթղթերով, որոնք պահվում են մամուլի ակումբի հաշվապահությունում:

2003թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդը կազմել է **9140000** դրամ:

Սույն հաշվետվությունն ընդգրկում է միայն այն գործունեությունը, որտեղ ֆինանսները Երեւանի մամուլի ակումբն է տնօրինել: